ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1
N PDU-200-01-26
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան << 10 >>. << 03 >>. **2026թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրաու), մի կողմից, և «Հայփոստ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Շուշան Ալեքսանյանի, հիմք ընդունելով 05.03.2026 թվականին կնքված **PDU-200-01-26** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **PDU-200-01-26** ծածկագրով գնման պայմանագրի 3.3 կետով սահմանված **242 000 000** (երկու հարյուր քառասուներկու միլիոն) ՀՀ դրամ գումարից **135 806 298** (հարյուր երեսունհինգ միլիոն ութ հարյուր վեց հազար երկու հարյուր իննսունութ) ՀՀ դրամը որպես կանխավճար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 5-րդ ենթակետը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ **Ա. Ֆիդանյան**
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Հայփոստ» ՓԲԸ
ք. Երևան, 0061, Արշակունյաց 65/5
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
ՀՎՀՀ՝ 02507464
Հեռ.՝ (010) 544-444
Էլ. հասցեն՝ business@haypost.am

_____ **Շ. Ալեքսանյան**
/«Հայփոստ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ